«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«16» հոկտեմբեր 2015թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ Մ. Անանյան

ԳԲԽ-36/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի 28.09.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 28.09.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԾՔ-

ՊԸԱՇՁԲ-15/5» ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 23.09.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ և 6 արձանագրության 1.3-րդ և 1.4-րդ կետերով կայացված որոշումները չեն համապատասխանում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» բաժնում 5.3 հավելվածով պահանջել է 3 հոգի ինժեներ՝ ոչ պակաս 3 տարի մասնագիտական աշխատանքային փորձով (պարբերությունը նույնությամբ արտատպված է հրավերից):

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ և 35-րդ հոդվածներով սահմանված պահանջները, քանի որ Պատվիրատուն չմերժելով Ընկերության կողմից ներկայացված հայտը, այնուամենայնիվ Ընթացակարգը համարել է չկայացած:

2. ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքապետարանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքապետարանը 05.10.2015թ. թիվ 271 գրությամբ ներկայացրել է «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/5» ծածկագրով պարզեցված ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջներով: Մասնավորապես, համաձայն Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ընկերության կողմից ներկայացրած ոչ գնային առաջարկի հիմնավորվածությունը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին (18.09.2015թ. թիվ 5 արձանագրություն և 23.09.2015թ. թիվ 6 արձանագրություն):

Ընկերության կողմից ներկայացված լիցենզիայի և համաձայնագրի անհամապատասխանությունը հիմք է հանդիսանում լիցենզիայի գործողության կասեցման համար՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ և 8-րդ կետերի:

Գնահատող հանձնաժողովը Ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Կենտրոնում 15.10.2015թ. ժամը 17:30-ին տեղի ունեցած նիստին Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ առաց «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժելու մասի որոշումն ընդունելը Ընթացակարգը չկայացած հայտարարելը եղել է տեխնիկական վրիպակի արդյունք:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունել է, որ Հրավերով սահմանված չի եղել բնակելի, հասարակական, արտադրական լիցենզիա ունեցող անձի համաձայնագրեր ներկայացնելու պահանջ և Հրավերով պահանջվել է ներկայացնել միայն 3 տարվա աշխատանքային փորձ ունեցող ինժեներների գրավոր համաձայնագիրը, ինչը կատարվել է Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից:

<u>3. ԳԲԽ-36/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-36/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի մսուր-մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/5» պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն:

2. «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/5» պարզեցված ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1-ին մասի 2.3 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ աշխատանքային ռեսուրսներ:

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.6) պայմանագրի կատարման համար նույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները:

Ընդ որում, աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է ***առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայ-նությունները***՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝

Աշխատակազմում պետք է ընդգրկված լինի առնվազն յուրաքանչյուր չափաբաժնի համար 3 հոգի ինժեներ՝ ոչ պակաս 3 տարի մասնագիտական աշխատանքային փորձով:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

3. «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն, մասնակցելով Ընթացակարգին, ներկայացրել է տեղեկանք կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին, որին կից ներկայացրել է «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների (Հ.Պողոսյանի, Ս.Մխիթարյանի և Ն.Սարգսյանի) հաստատած գրավոր համաձայնությունները՝

իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Ներկայացված դիպլոմների համաձայն՝ վերոհիշյալ անձանց շնորհվել են համապատասխանաբար՝ ինժեներ-շինարարի, երթևեկության կազմակերպման ճարտարագետի որակավորում և ճարտարագիտության բակալավրի աստիճան:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.09.2015թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 68-րդ կետով նախատեսված Հրավերի պահանջներին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության՝

- 1.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ փաստաթղթերում բացակայում է ***բնակելի, հասարակական, արտադրական լիցենզիա ունեցող անձի համաձայնագիրը***, ներկայացված է այլ անձի համաձայնագիր, որը չի համապատասխանում սկզբնական հայտում ներկայացրած անձի տվյալների հետ:
- 1.4 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/5» պարզեցված ընթացակարգը համարել չկայացած:

<u>4. ԳԲԽ-36/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի 28.09.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքապետարանի ներկայացրած 05.10.2015թ. թիվ 271 գրությունը և կից փաստաթղթերը, «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/5» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 68-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

«ա» հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները:

«բ» աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում տրված է «լիցենզավորված անձ» հասկացության սահմանումը, որի համաձայն՝ լիցենզավորված անձը իրավաբանական կամ ֆիզիկական անձն է կամ անհատ ձեռնարկատերը, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկը, որն օրենքով սահմանված կարգով ստացել է լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու լիցենզիա:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է կասեցվել՝

1) լիցենզավորված անձի կողմից լիցենզիան օրենքով չնախատեսված դեպքերում այլ անձի օգտագործման տալու, գրավ դնելու կամ օտարելու դեպքում.

2) լիցենզավորված անձի կողմից սույն օրենքով նախատեսված դեպքերում փոփոխությունների մասին լիցենզավորող մարմնին ժամանակին չհայտնելու կամ սույն օրենքով սահմանված դեպքերում անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթղթերի պատճենները լիցենզավորվող մարմին ժամանակին չներկայացնելու դեպքերում.

8) մասնագիտական գիտելիքներ կամ լիցենզիայի պահանջներով կամ պայմաններով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող անձի բացակայության դեպքում՝ միայն այդ անձի մասով, բացառությամբ սույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքի:

Հրավերի ուսումնասիրությունից երևում է, որ Հրավերում բացակայել է Պատվիրատուի նշած մասնակցի կողմից բնակելի, հասարակական, արտադրական լիցենզիա ունեցող անձի կողմից հաստատված գրավոր համաձայնագիր ներկայացնելու պահանջը:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 68-րդ կետով և Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանված պահանջները, քանի որ «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ն, Կարգի 68-րդ կետի և Հրավերի պահանջներին համապատասխան, ներկայացրել է տեղեկանք կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին, որին կից ներկայացրել է առաջադրված աշխատակազմում

ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին: Վերոհիշյալ փաստը ընդունել է նաև Պատվիրատուի ներկայացուցիչը՝ Կենտրոնում 15.10.2015թ. ժամը 17:30-ին տեղի ունեցած նիստի ժամանակ:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Ընկերության կողմից ներկայացված լիցենզիայի և համաձայնագրի անհամապատասխանությունը հիմք է հանդիսանում լիցենզիայի գործողության կասեցման համար՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ և 8-րդ կետերի, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված հոդվածի համապատասխան մասի կետերը նման դրույթ չեն պարունակում:

Բացի այդ, «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից, Հրավերի պահանջներին համապատասխան, ներկայացվել է նաև առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները, որի համաձայն Հ.Պողոսյանին, Ս.Մխիթարյանին և Ն.Սարգսյանին շնորհվել են համապատասխանաբար՝ ինժեներ-շինարարի, երթևեկության կազմակերման ճարտարագետի որակավորում և ճարտարագիտության բակալավրի աստիճան:

Գտնում ենք նաև, որ Պատվիրատուի կողմից խախտվել է նաև Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, քանի որ առանց «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պայմաններին չհամապատասխանող ճանաչելու և այն մերժելու՝ Պատվիրատուն վերոհիշյալ հիմքով «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/5» պարզեցված ընթացակարգը համարել է չկայացած: Վերոհիշյալ խախտումը ընդունել է նաև Պատվիրատուի ներկայացուցիչը՝ Կենտրոնում 15.10.2015թ. ժամը 17:30-ին տեղի ունեցած նիստի ժամանակ:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք «Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ-ի 28.09.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի մսուր-մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԾՔ-ՊԸԱՇՁԲ-15/5» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.09.2015թ. թիվ

5 արձանագրության 1.1 կետով և 23.09.2015թ. թիվ 6 արձանագրության 1.3 և 1.4 կետերով ընդունված որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժ/պ՝
ԳԲԽ-36/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան